Սորա տակը նոյն գրչով.

«Ես Փառանց տվի արդիւնս։ Բ։ Ժամ տվին։ Ա։ ինձ։ Ա։ իմ մաւրն»։

Այս երկու արձանագրութիւնները գըրուած են Թադէոս և Հայրապետ քահանաների (1214 թ.) և Գերք ու Շաքար ամուսինների արձանագրութիւնների մէջ, որով եւ նրանց ծագման postique-ն ու antique-ը յայտնի, այսինքն 1214 և 1293 թուականների մէջ։ Սոյն Գրիգոր չգիտը նուէր ունի տուած և մերձակայ Աղջոց Ս. Ստեփանոսին, որ կարծում ենք, գրուած պիտի լինի դարի երեսնական թուականներին, արձանագրութեան տեղից դատելով. Հաւուց Թառի արձանագրութիւններն էլ մօտաւորապէս նոյն ժամանակը պէտք է դնել (տե՛ս պարկ. 10)։

Ամենաւագ քահանան գնել է Բանանց գիւղի (Դանձակի շրջան) եկեղեցու «Պապ» կամ «Մեր» կոչուած ձեռագիր աւետարանը «ի գաւառէն Գառնու ի վանացն Հաւու Թառու» և ՉԽԴ (= 1294) թուին կազմել տուել Գերգ անունով մէկին, որ կարող է վերոյիշեալ Շաքարի ամուսինը լինել (Յա-էլ. 3)։ Ստացողն ու կազմողն ունին իրենց յիշատակարանները մի և նոյն գրով, ինչպէս և նորոգուած մասն է։ Աւետարանը ծագմամբ աւելի հին է, հնագրական և մանրանկարչական նշաններով՝ ոչ ուշ քան ԺԱ. դարը. տարաբաղդաբար, վերջին յիշատակարանը ընկած լինելու պատճառով, հնարաւորութիւն չունինք գրիչը, տեղն ու ժամանակը ճշգիւ որոշելու, որ Հաւուց Թառում գըրուած լինելու դէպքում, հնագոյն յիշատակը կ'ունենայինք, գուցէ և կարևոր ծանօթութիւններ վանքի մասին. բայց ուշադրութեան արժանի է և այն երևոյթը, որ այնտեղ է նորոգուել և ծախուել այդ նշանաւոր ձեռագիրը(1)։

Օրբէլեանի ընդդէմ Անաւարզեցու գրած ձեռնարկին (1296 թ.) ստորագրում է աբեղեան Հայաստանի նշանաւոր եպիսկոպոսների և վարդապետների հետ նաև «տէր Մխիթար Հաւուց Թառոյ եպիսկոպոս»(1)։

Հաւուց Թառում Գրիգոր գրիչը գրել է մի աւետարան «ի թուականութեանս հայոց ՉԽԶ (= 1297), ի թագաւորութեանն բարեպաշտ եւ ՀՀծասէր թագաւորին հայոց Հեթմոյ՝ մեծի և յաղթողի և ի կաթողիկոսութեանն հայոց ՀՀն Գրիգորի և յաշխարհակալութեանն Ղազան Խանին և ի մերոյ նահանգի տերութեան Խոշաքի և Զաքարիայի որդոյ Նորին և ի տերութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց Թառոյ պարոն Բեսութային և Խոյանձային . . . . ի սէր եւ ի հոչակաւոր յՀծաբնակ ուխտիս Հայոց Թառ յորջորջելոյ՝ ընդ հովանեաւ կաթուղիկէ եկեղեցոյ սէր Սիոնի և ՀՀծընկալ սէր Ամենայփրկչիս, ի ձեռն սորա բա(զում) սքանչելիք եւ պէս պէս բժշկու(թիւ)նք կատարին»։ Ստացողն է Բուրթ և իւր ամուսինը Ասլէր, իսկ նրանց ծնողներն են Մխիթարիչ և Մամխաթուն։ Գրչին օգնել է նրա հոգևոր եղբայրը՝ գեղարոյս Մխիթար քահանան(2)։

Աբրահամ վարդապետի մասին յիշատակութիւնունինք և նորա աշակերտ Ենոք քահանայի կանգնած խաչքարի արձանագրութեան մէջ, կից Սարգիս քահանայի կանգնած խաչքարին, որոնք ընկած են և միայն պատուանդաններն են մնացել (պարկ. 12).

«. . . (նուա)ստ քահանա Էնոք կանգն
. . . (եցի զխ)աչս բարեխաւս ինձ եւ
. . . (ծնաւ)ղաց իմոց եւ Աբրահամու վրդ
ապետին իմոց աղաչեմ յիշեցէք ի քրս»(3)։

Նոյն Գրիգոր գրիչը մի տարի յետոյ՝ «ի թվ։ ՉԽԷ։ (ի) մեծ մէնաստանիս Հայոց Թառ ընդ հովանեա(ւ ս)ՀՀ Ամենափրկչիս» Սարգիս կուսակրօն քահանայի խնդիրքով,

(1) Աւետարանը մեծադիր է, մագաղաթ, խոշոր, բոլորաձեւ երկաթագրով, երկսիւն. մանրանկարչական պատկերներ, զարդեր եւ զարդագրեր չունի, եթէ սկզբում յեն եղել, ընկած են առաջին թերթերը. միայն Մատթէոսի մէջ, միջին լուսանցքում կան ծողիկի վերայ փոքր թռչուններ՝ կարմիր կամ սեւ գունաւորութեամբ։ Սկզբից պակասաւոր է եւ բնագիրը. սկսւում է Մատթ. ե. 20 «Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի...»։ Բացի վերոյիշեալ երկու յիշատակարաններից. կան եւ ուրիշներ՝ 1453. 1461. 1511. 1625 եւ 1805 թուականներով։ Տե՛ս եւ Բարխուդարեան. Արցախ, 273։

(1) Օրբելեան. Ղուկ. հրատ. Թիֆլիս. 1911. 417։

(2) Ձեռ. էջմ. N 1124|2838 (Յաւել. 2)։ Այստեղ յիշուած խոշաքը Իւանէ աթաբակի թոռն էր Աւագի դուստրը. որ ամուսնացաւ Ապաղայի մանդոլ Սահիպ դիւանու հետ (Օրբ. 448). սրանց որդու՝ Զաքարիայի անունը յիշւում է Բջնիի, Դիտարգելի եւ Դառնիի արձանագրութիւնների մէջ. վերջինը՝ Տրդատայ թախտում՝ Պրոֆ. Մառի պեղումներով երեւան հանուած։ Իսկ Բեսութան եւ իւր կինը. հաւանօրէն. Պահլաւունիք են, որոնց եւ պատկանում էր վանքը։

(3) Տողերի առաջին տառերը մենք ենք լրացնում. պակասաւոր է։